ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

04.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/82

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2018թ. թիվ 03/26-3/10490-18 գրությամբ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Մասիսի համայնքապետարանի 07.06.2018թ. թիվ 331 և 08.06.2018թ. թիվ 334 գրությունների հիման վրա, 11.06.2018թ. թիվ 03/26-3/10490-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/82 ընթացակարգի շրջանակներում 13.06.2018թ. ժամը 11:40-ին և 15.06.2018թ. ժամը 11:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Մասիսի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Մասիսի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.06.2018թ. թիվ 331 գրությամբ հայտնել է, որ 07.05.2018թ. Մասիսի քաղաքապետարանի և «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով պայմանագիր, համաձայն որի աշխատանքների ավարտը սահմանվել է 07.06.2018թ. և առ այսօր պայմանագրով սահմանված աշխատանքները չեն կատարվել, ուստի Պատվիրատուն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն պայմանագիրը միակողմանի լուծել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/82 ընթացակարգի շրջանակներում 13.06.2018թ. ժամը 11:40-ին և 15.06.2018թ. ժամը 11:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2018/82 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2018/82 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Մասիսի համայնքապետարանի և «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 07.05.2018թ. կնքվել է Մասիսի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների գնման «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ կապալառուն (տվյալ դեպքում՝ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն) պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի 5-րդ ավագ դպրոցին հարակից հողամասի (նախադաշտ) ցանկապատի կառուցման և բարեկարգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

3. Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքները ավարտել 07.06.2018թ.:

4. «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին ուղղված 06.06.2018թ. թիվ 281 գրությամբ, Մասիսի համայնքապետարանը հայտնել է, որ միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ Ընկերության կողմից սահմանված աշխատանքները չսկսելու պատճառով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.06.2018թ. թիվ 03/26-3/10490-18 գրությունը, Մասիսի համայնքապետարանի 07.06.2018թ. թիվ 331 և 08.06.2018թ. թիվ 334 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ

որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Մասիսի համայնքապետարանի և «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 07.05.2018թ. կնքվել է Մասիսի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների գնման «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով պայմանագիրը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ կապալառուն (տվյալ դեպքում՝ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն) պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի 5-րդ ավագ դպրոցին հարակից հողամասի (նախադաշտ) ցանկապատի կառուցման և բարեկարգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1-ին կետի 1.3-րդ ենթակետով նախատեսվել է, որ Աշխատանքները սկսվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Պպայմանագրի կնքման օրվանից մինչև 30 օր:

Պայմանագրի հավելված 2-ով նախատեսվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը, որի համաձայն՝

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Բնահողի փորման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	Մինչև 5 օր
2	Մոնտաժման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	Մինչև 10 օր
3	Խողովակների տեղադրման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	Մինչև 15 օր

4	Ցանկապատի ժապավենային հիմքերի իրականացման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	Մինչև 25 օր
5	Ներկման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից	Մինչև 30 օր
6	Ընդամենը	30 օր, մինչև 07.06.2018թ.	

«ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին ուղղված 06.06.2018թ. թիվ 281 գրությամբ Մասիսի համայնքապետարանը հայտնել է, որ առ այսօր Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված աշխատանքները չեն սկսվել, որի հիման վրա Պավիրատուն միակողմանի լուծում է Մասիսի համայնքապետարանի և «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 07.05.2018թ. կնքված «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով պայմանագիրը:

Այսպես՝ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն Մասիսի համայնքապետարանի և «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 07.05.2018թ. կնքված «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով պայմանագրի համաձայն պարտավորվել է իրականացնել ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի 5-րդ ավագ դպրոցին հարակից հողամասի (նախադաշտ) ցանկապատի կառուցման և բարեկարգման աշխատանքները, որոնց կատարման վերջնաժամկետը սահմանվել էր 07.06.2018թ.: Նույն պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է նշված աշխատանքները սկսել Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և իրականացնել Պայմանագրի հավելված 2-ով հաստատված օրացուցային գրաֆիկին համապատասխան:

Արձանագրում եմ, որ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն սկսվել և սահմանված ժամկետում չեն իրականացվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները:

Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունների համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը*** և հատուցել իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3-րդ կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն խախտել է «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ի և Մասիսի համայնքապետարանի միջև 07.05.2018թ. կնքված «ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-18/8» ծածկագրով պայմանագրով ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, մասնավորապես՝ Ընկերությունը Պայմանագրով սահմանված ժամկետում չի սկսել և չի կատարել նույն պայմանագրով նախատեսված ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի 5-րդ ավագ դպրոցին հարակից հողամասի (նախադաշտ) ցանկապատի կառուցման և բարեկարգման աշխատանքները, որի հետևանքով Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետը միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ն թույլ է տրվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2018թ. թիվ 03/26-3/10490-18 գրությամբ «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08912844) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԳԵՎՇԻՆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ